ՄԱՐԻԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ*

Բանասիրական գիտ. թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

mariamhovsepian@mail.ru

0009-0005-9696-4246

DOI: 10.54503/1829-4073-2024.2.135-149

«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ (1920–1924 ԹԹ.)

Ամփոփում

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթը 1920–1924 թթ. հանգամանորեն անդրադարձել է Խորհրդային Հայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների կացությանը, հիմնախնդիրներին և պետական կառույցների կողմից նրանց ապրելակերպի բարելավմանը միտված աշխատանքներին: Այդ նյութերը վկայում էին, որ տարագիրների կենսապայմաններն աստիճանաբար կարգավորվում էին: Թերթը կարևորում էր այն, որ Խորհրդային Հայաստանում ապրող հայությանն այլևս չէր սպառնում ցեղասպանվելու վտանգը:

«Ճակատամարտն» առաջնահերթ էր համարում Հայկական հարցի զարգացումներին անդրադառնալը, քանի որ այդ թեման հայ տարագիրների մտահոգությունների կենտրոնում էր: Պարբերականը ներկայացնում էր թուրքական իշխանությունների գործադրած ջանքերը՝ Հայկական հարցը միջազգային հարաբերությունների ասպարեզից հանելու համար: Լուսաբանվում էր Հայկական հարցին առնչվող միջազգային խորհրդաժողովների ընթացքը:

Թերթի խմբագրակազմը գտնում էր, որ սփյուռքում անհրաժեշտ է համախմբվել ազգային դիմագիծը պահելու և Խորհրդային Հայաստանին աջակցելու ծրագրերի շուրջ: Խորհրդային Հայաստանում, ըստ պարբերականի հրապարակումների, գնահատելի աշխատանք էր տարվում երկրի վերաշինության գործում, որին օգտակար էին լինում արևմտահայ գաղթականները:

* *Հոդվածը ներկայացվել է 20.01.24, գրախոսվել է 20.01.24, ընդունվել է տպագրության 30.08.24:*

«Ճակատամարտի» աշխատակիցներն օբյեկտիվ պատկերացում էին տալիս նաև խորհրդային բռնաճնշումների մասին: Նրանք գրում էին, որ Խորհրդային Հայաստանում գաղթականներին տեղ տալու համար նրանցից պահանջում էին դավանել համայնավարական գաղափարներ և ապրել միակուսակցական համակարգի պայմաններում: Լրագիրը կարևորում էր արևմտահայ գաղթականների ինտեգրումը խորհրդահայ նոր իրականության մեջ: Բացի այդ՝ խմբագրակազմը վստահ էր, որ Խորհրդային Հայաստանում կամ որևէ այլ երկրում հայտնված հայրենազրկված, ցեղասպանությունը վերապրած գաղթականները և նրանց ժառանգներն իրենց հոգիներում վառ էին պահելու պահանջատիրության ջահը:

Բանալի բառեր՝ *«Ճակատամարտ» օրաթերթ, Հայկական հարց, Արևմտյան Հայաստան, Խորհրդային Հայաստան, Սևրի պայմանագիր, Լոզանի պայմանագիր, հայ գաղթականներ:*

Ներածություն

Հոդվածի նպատակն է ներկայացնել Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած և Խորհրդային Հայաստանում ապաստանած գաղթականների խնդիրները և ապրելակերպն՝ ըստ Կ. Պոլսում 1918–1924 թթ. հրատարակված և բարձր վարկանիշ ունեցած «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումների: Անդրադարձ է կատարվել նաև խորհրդահայ իրականությանը ինտեգրվելու և պետական մարմինների կողմից հատուկ այդ նպատակով իրականացված ծրագրերին ու ձեռնարկած քայլերին: Այս առումով ուսումնասիրվել են պարբերականի այն վերլուծական հոդվածները, հաղորդումներն ու հարցազրույցները, որոնք առնչվում էին մասնավորապես որբ երեխաների ճակատագրին: Պետք է ընդգծել, որ պոլսահայ այս լրագրի էջերում զետեղված են աղբյուրագիտական արժեք ունեցող նոր տեղեկություններ, նամակներ և խնդրո առարկա թեմայի վերաբերյալ որոշումներ ու փաստաթղթեր, որոնց շնորհիվ առավել ամբողջական են դառնում արևմտահայ գաղթականների հիմնախնդիրները լուծելու ուղղությամբ Խորհրդային Հայաստանի իշխանությունների աշխատանքի որակի և գրանցած արդյունքների մասին մեզանում ձևավորված մոտեցումները: Այս տեսակետից կարևորվում է հոդվածի թեման՝ իր պարունակած նորույթով, քանի որ մեզանում առաջին անգամ արևմտահայ մտավորականների ջանքերով Մեծ եղեռնից հետո Կ.Պոլսում տպագրված օրաթերթի նյութերի հիման վրա օբյեկտիվ պատկերացում է տրվում բռնագաղթված ու Խորհրդային Հայաստանի քաղաքացիներ դար-

ձած տարագիրների կյանքի, դժվարությունների և նոր հայրենիքում հաստատվելուց հետո Հայկական հարցի հետ կապված նրանց մտահոգությունների ու հույսերի մասին: Ընդգծենք, որ ուսումնասիրության ընթացքում կիրառվել է պատմա-համեմատական վերլուծության մեթոդը: Նշենք, որ հոդվածի թեման ունի արդիական հնչեղություն: Մեկ դարից ավելի է անցել, բայց սույն ուսումնասիրության շրջանակում քննվող պատմական ժամանակահատվածում հայ ժողովրդի կյանքում 1915–1923 թթ. տեղի ունեցած կործանարար իրադարձությունների մեծ մասը, աշխարհաքաղաքական շահերի բախման իրողությունները կարծես կրկնվում են մեր օրերում: Հայտնի աքսիոմա է, թե պատմությունը կրկնվելու հակում ունի: Այն ժողովուրդները, որոնք դասեր չեն առնում, կամ չեն ցանկանում քաղել անցյալում իրենց հետ կատարվածից, կարծում ենք, որ կվտանգեն սեփական ապագան, անգամ կարող են կորցնել ոչ միայն ձեռքբերումները, այլև պետականությունը: Կ.Պոլսում և ընդհանրապես աշխարհասփյուռ հայության շրջանում ընթերցողների ստվար շրջանակ ունեցող «Ճակատամարտ» օրաթերթում[1] տեղ գտած պատմական կարևոր փաստերն ու դրանց վերլուծությունները, ճակատագրական իրադարձությունների արձանագրումներն այս տեսանկյունից կարող են օգտակար լինել ժամանակակիցներիս համար: Դրանք հավաստի տեղեկություններ են, որոնց վրա հենվելով, պատմաբանն ու քաղաքագետը, դիվանագետն ու նույնիսկ շարքային քաղաքացին կարող են հստակություն մտցնել իրենց հետաքրքրող պատմական խրթին և լուսաբանման կարոտ բազմաթիվ հարցերում:

«Ճակատամարտ» օրաթերթը և խորհրդահայ իրականությունը

Գաղթականների ներկային, ապագային և հայոց անկախ պետականությանը սպառնացող վտանգներին առնչվող հարցերը մեծամասնություն էին կազմում «Ճակատամարտի» հրապարակումների մեջ: Խորհրդային Հայաստանին վերաբերող հոդվածները, թղթակցություններն ու լուրերը զետեղվում էին «Հայկական կյանք», «Հայաստան», իսկ 1924 թ. հունվարի 2-ից՝ նաև «Լուրեր Հայաստանէն» խորագրերի ներքո: ՀՅԴ ջանքերով հրատարակվող այս թերթը Խորհրդային Հայաստանում չուներ իր թղթակիցները: Խմբագրակազմը, այնուհանդերձ, Կ.Պոլիս գործնական այցով եկած կամ արտագաղթած հայաստանցիների, արևմտահայ տարագիրների հետ հանդիպելով,

[1] «Ճակատամարտ» օրաթերթը համարվում է Կ.Պոլսում 1909–1915 թթ. լույս տեսած ՀՅԴ Արևմտյան բյուրոյի պաշտոնական օրգան «Ազատամարտ» օրաթերթի իրավահաջորդը, թեև արդեն հրատարակվում էր (1918–1924 թթ.) իբրև ոչ պաշտոնաթերթ:

նրանց հետ զրուցելով, տպագրում էր թարմ և օբյեկտիվ տեղեկություններ այնտեղ տեղի ունեցող դեպքերի ու հայկական կյանքի զանազան իրողությունների մասին: Դրան զուգահեռ՝ «Ճակատամարտը» տեղ էր հատկացնում Հայաստանից խմբագրությանն ուղարկված նամակներին, գրություններին, բողոքներին: Տեղեկատվության աղբյուրներն առավելապես չէին նշվում: Երբ խմբագրակազմի համար կարծես ավելի հստակ է դառնում, որ Հայաստանի խորհրդայնացումն այլևս անբեկանելի իրողություն է, որ Հայկական հարցն այդ ժամանակափուլում չունի լուծման այլ տարբերակներ, թերթը, միանալով սփյուռքյան մնացած լրագրային բանակին, 1924 թ. իր հրապարակումների միջոցով ձգտում է օգտակար լինել պետականության թեկուզ առերևույթ նշաններով օժտված Խորհրդային Հայաստանին: Այս շրջանում պարբերականը արտատպում է Խորհրդային Հայաստանի թերթերից հիմնականում լուրեր, որոնք ներկայացնում էին հայաստանցիների առօրյան, դժվարությունները, հոգսերը, հաջողություններն ու ձեռքբերումները:

1920–1923 թթ. վերլուծականների մեջ շեշտվում է, որ Հայաստանը բռնությամբ էր խորհրդայնացվել,[2] և ժողովուրդը, այդ թվում՝ արևմտահայ գաղթականները ճնշող մեծամասնությամբ դեմ էին եղել Հայաստանի Առաջին հանրապետության վերացմանը և մեծամասնականների՝ իշխող ուժ դառնալուն:[3] Բերենք օրինակ: «Ի՞նչ կպատմեն թիվերը» հոդվածում Ռուբեն Սայանը գրում էր հետևյալը. «Հայ ժողովուրդի այն տարրերը, որոնք պետականօրէն մտածել գիտեն, պէտք է գիտակցին, թէ որքա՛ն ծանր պիտի նստի մեր վրայ կարմիրներու բռնապետութիւնը: 8 ամիս է, որ անոնք նստած են մեր ուսերուն վրայ և կը խեղդեն մեզ՝ ասպատակութիւններ, թալան, քաղաքային կռիւ, քօլէրա եւ սով»:[4] Հոդվածագիրը խոսում է փաստերով և թվային տվյալներով: Ըստ այդմ՝ թուրքերի ու մեծամասնականների արշավանքների նախօրեին Հայաստանի Առաջին հանրապետությունում կար ավելի քան երկու միլիոն հայ և այլազգի բնակչություն՝ առանց նկատի ունենալու Ղարաբաղը, Գանձակի գավառը, Ախալքալակի շրջանը ու չեզոք համարվող գոտին: 1.500.000 հայության 300.000-ը նախկին «տաճկահայ» գաղթականներն էին, իսկ 500.000-ը՝ ռուս մալականները, քրդերը, եզդիները, հույները, ասորիները, տաճիկներն ու թաթարները:[5] Խորհրդայնացումից հետո հայ ժողովուրդն

[2] «Ճակատամարտ», թիվ 695, 02.03.1921:
[3] **Հովսեփյան** 2009, 118–119:
[4] «Ճակատամարտ», թիվ 849, 02.09.1921:
[5] «Ճակատամարտ», թիվ 849, 02.09.1921:

«ամէն ամիս զոհ կը բերէ աւելի քան 5.000 մարդ այն սիսթէմին, որ կը տիրապետէ հիմա Հայաստանի մէջ»:[6] Ռ. Սկյանը հիշատակում է արևմտահայ գաղթականների արտագաղթը, որն առաջին հերթին պայմանավորվում էր նրանց սոցիալ-տնտեսական անմխիթար կացությունով և այն հանգամանքով, որ հայաստանցիների «մեծամասնութիւնը նախկին արեւմտահայերուն կը նային իբրեւ հակայեղափոխական տարրերու վրայ», ինչի հետևանքով նրանք ենթարկվում էին զրկանքների ու հալածանքների:[7] Այս թվային տվյալները «Ճակատամարտը» վերցրել էր Խորհրդային Ռուսաստանի «Известия» թերթից:[8] Օգտվել էր մեկ այլ աղբյուրից ևս՝ պատկերացում տալու համար, թե ինչ անմարդկային պայմաններում էին ապրում հայաստանցիները, ի թիվս որոնց՝ արևմտահայ գաղթականները: Այդ անգամ տեղեկությունները քաղված էին Ամերիկյան նպաստամատույցի կովկասյան բաժնի նախագահին 1921 թ. սեպտեմբերի 8-ին Թիֆլիսից ուղարկված տեղեկագիր-հեռագրից:[9] Այնտեղ նշվում էր, որ հիշյալ կազմակերպության պատգամավորների խումբը հանդիպել էր Հայաստանի արտգործնախարար Ասքանազ Մռավյանի և պարենավորման նախարար Սարգիս Սրապյանի հետ: Պատվիրակությունն ընդունել էր նրանց պարենային օգնության խնդրանքը՝ խոստանալով այն անմիջապես ներկայացնել ԱՄՆ կառավարությանը, քանզի երկրում հացի խնդիրը սուր էր դրված:[10] Պատգամավորների հաղորդումների համաձայն՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմից հետո Հայաստանից հեռացող թշնամու բանակն իր հետ տարել էր հայկական բնակավայրերում ձմեռվա համար ամբարված մթերքի ողջ պաշարը և ավերել էր նրանց տունուտեղը: «140 գիւղեր ամբողջովին աւերուած են, և ասոնց բնակիչները, առանց ապաստարանի, կը բնակին դաշտերու մէջ կամ կը թափառին քաղաքին փողոցները»:[11] Շատերը բնակարան չունեին, իսկ եղած տները տաքացնելու նպատակով բնակիչները նաև քանդում էին իրենց փայտաշեն տների տանիքները. «Տուները բաց են ձիւնին և անձրեւին դէմ, հետեւաբար՝ անբնակելի»:[12] Տեղեկագրում նշվում էր, որ, օրինակ, Ալեքսանդրապոլի փողոցներում յուրաքանչյուր օր քաղցից և հյուծվածությունից մահանում էին մանուկներ, երիտասարդներ ու ծերեր, որոնց

[6] «Ճակատամարտ», թիվ 849, 02.09.1921:
[7] «Ճակատամարտ», թիվ 849, 02.09.1921:
[8] «Ճակատամարտ», թիվ 848, 01.09.1921:
[9] «Ճակատամարտ», թիվ 859, 14.09.1921:
[10] «Ճակատամարտ», թիվ 859, 14.09.1921:
[11] «Ճակատամարտ», թիվ 859, 14.09.1921:
[12] «Ճակատամարտ», թիվ 859, 14.09.1921:

դիակները, առանց եկեղեցական արարողության, թաղվում էին կայարանի մոտակայքում փորված փոսերում:[13]

Խորհրդային բռնաճնշումների ու Հայաստանի բնակչության թալանի միջով անցան նաև արևմտահայ գաղթականները, որոնք այլևս Խորհրդային Հայաստանի քաղաքացի էին համարվում: Այդ կարգավիճակով նրանք ապրեցին այդ երկրում՝ կիսելով արևելահայերին բաժին հասած գալիք բոլոր փորձություններն ու դժվարությունները՝ սով, կուլակաթափություն, տնտեսական նոր քաղաքականություն, ստալինյան հալածանքներ, Երկրորդ աշխարհամարտ, հետպատերազմյան պետականաշինության ու վերականգնողական աշխատանքներ և այլն:

«Ճակատամարտ» օրաթերթը մինչև իր վերջին համարն անդրադարձել է հայ տարագիրների վիճակին, խնդիրներին, քաղաքական նոր համակարգում պարտադրված ապրելակերպին, հանուն հավատի ու քաղաքական դիրքորոշման նրանց կրած ճնշումներին:

«Ճակատամարտը» լուրերի ու թղթակցությունների միջոցով ներկայացնում էր նաև Խորհրդային Հայաստանի ձեռնարկումները՝ առկա խնդիրները չեզոքացնելու ուղղությամբ: Դրանք հիմնականում ամփոփված էին 1924 թ. հավաքածուի մեջ: Այդ նյութերը վկայում էին, որ կյանքը կամաց-կամաց գտնում էր իր հունը: Թերթը կարևորում էր այն, որ Խորհրդային Հայաստանում ապրող հայությանն այլևս չէր սպառնում ցեղասպանվելու վտանգը: Տարիների ընթացքում պարզվեցին ազգային ինքնությանը սպառնացող բազմաթիվ հանգամանքներ, որոնց այս հոդվածի շրջանակում անդրադառնալը դուրս է մեր ուսումնասիրության նպատակից:

Պետական համապատասխան մարմիններն աստիճանաբար կարողանում էին կապեր հաստատել ու ձեռք բերել բնակչության կարիքների համար անհրաժեշտ քանակությամբ ցորեն, գարի, կորեկ, բուրդ, բամբակ, անասնագլխաքանակ ու անասնակեր, հագուստ, կոշիկ, կենցաղային իրեր և հարմարություններ: «Ճակատամարտը» տեղեկացնում էր նաև, որ Հայաստանում գրադարանների ընդհանուր թիվը հասնում է 51-ի:[14] 1923 թ. հունվարի 2-ի խմբագրականում փաստվում էր, թե Խորհրդային Հայաստանի կառավարությունը գոհ էր, որ կարողացել էր շահել խաղաղություն ու համերաշխություն. «Մնացածը վեր է իր ուժէն: Նորէն մխիթարական է, որ այդ վանդակապատ սահմաններուն մէջ աւելի քան մէկ միլիոն ժողովուրդ քիչ-շատ ազատ

[13] «Ճակատամարտ», թիվ 859, 14.09.1921:

[14] «Ճակատամարտ», թիվ 873, 30.09.1921:

շունչ կը քաշէ և կրնայ օրը իրիկուն ընել՝ առանց մղձավանջի: Աւելին ցնորք է այժմ թէ՛ իրենց, թէ՛ մեզի համար»:[15]

Հայկական հարցը «Ճակատամարտի» հրապարակումների կիզակետում

«Ճակատամարտի» խմբագրակազմը և հոդվածագիրները «ներսից» գիտեին հայ գաղթականների մտահոգությունների, առօրյա հոգսերի, ապագայի հանդեպ նրանց տածած հույսերի ու Հայկական հարցի հետ կապված ակնկալիքների մասին: 1914–1918 թթ. ընթացքում երիտթուրքական իշխանությունների ծրագրած և իրագործած Հայոց Մեծ եղեռնից մազապուրծ եղած մտավորականներից շատերն էին համախմբված այս պարբերականի շուրջ: Այդ տարիներին իրենց բնօրրան հայրենիքից բռնի տեղահանված արևմտահայերը տասնյակ հազարներով գաղթել էին հիմնականում Արևելյան Հայաստան, Հյուսիսային Կովկաս, Վրաստան, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Իրան:[16] Օսմանյան, հետագայում նաև հանրապետական Թուրքիայի տարածքում հայությունը կենտրոնացել էր առավելապես Կ. Պոլսում, իսկ որոշ բնակավայրերում դեռևս բնակություն հաստատած հայ տարագիրները (որբեր, ծերեր, կանայք ու աղջիկներ) տարիների ընթացքում հայերի հանդեպ որդեգրված պետական հալածական քաղաքականության հետևանքով կամ ստիպված լքեցին Թուրքիան կամ քրդացան ու թուրքացան:

Խորհրդայնացված և անկախ պետականությունը կորցրած Հայաստանում բնակվող արևմտահայերը 1920-ականների սկզբին սպասում էին, որ Հայկական հարցը հայանպաստ լուծում կստանար՝ ըստ 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրված, բայց չվավերացված Սևրի դաշնագրի:[17] Մոսկվայում, ապա Կարսում բանակցություններ էին ընթանում խորհրդային և թուրքական իշխանությունների միջև, որոնք, ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, ավարտվեցին ի վնաս հայության շահերի:[18]

Խորհրդայնացված Հայաստանում 1921 թ. փետրվարին տեղի ունեցած ապստամբությունը թեև ճնշվեց իշխանությունների կողմից, բայց վկայեց հա-

[15] «Ճակատամարտ», թիվ 1261, 02.01.1923:
[16] Հայոց պատմություն 2010, 61, 65:
[17] Հայոց պատմություն 2010, 157:
[18] Հայոց պատմություն 2010, 324–339, 367–374:

յերի՝ ազատատենչության ու ինքնիշխան պետության մեջ ապրելու ցանկության մասին:[19]

Պարբերականն ուշի ուշով հետևել է Հայկական հարցի զարգացումներին և ողջ հայության սպասումներին, որոնք հետևյալ կերպ կարելի է ամփոփել. արևմտահայության վերադարձ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի իրենց բնակավայրերը և անկախ պետականության վերականգնում՝ Սևրի միջազգային պայմանագրի կետերի համաձայն:[20]

Պետք է փաստել, որ հայությունը, ի դեմս իր մտավորական և քաղաքական վերնախավի, այդպես էլ մնացել էր դիվանագիտական ռոմանտիզմի պատրանքներում՝ չհասկանալով ու չընդունելով կատարված իրողություններն՝ իրենց դառը պտուղներով հանդերձ: Այնինչ, 1920–1923 թթ. տեղի էին ունեցել հայ ժողովրդի ապագայի համար կանխորոշիչ աշխարհաքաղաքական իրադարձություններ:[21]

Այդ ամենի սթափ գիտակցման բացակայությունը և հայոց պահանջատիրությունը զուտ արդարության սկզբունքի վրա խարսխելը, ինչը հակասում է դիվանագիտության չգրված օրենքներին ու միջազգային քաղաքական շահերի խաղին, պարզ է, որ դրական լուծումներ չէր ապահովելու ցեղասպանության վտանգներով անցած, հայրենիքից բռնի և թուրքերի կարծիքով՝ անվերադարձ վտարված, անկախ պետականությունից զրկված հայ ժողովրդի համար: Այս ամենը նաև ի վերջո հանգեցնելու էր նրան, որ Խորհրդային Հայաստանում ապրող արևմտահայ գաղթականները, նրանց ժառանգները և ընդհանրապես տեղաբնակ հայությունը պետք է աստիճանաբար համակերպվեին պարտադրված իրականությանը: Շատ դեպքերում այդ համակերպումը, կարելի է թերևս պնդել, որ եղել է զուտ արտաքուստ, իսկ ներքուստ մարդիկ հավատարիմ էին իրենց դավանած սկզբունքներին, արգելված քրիստոնեական հավատքին, էրգրից ժառանգած ավանդույթներին, մշակութային արժեքներին՝ մինչև վերջին շունչը կարոտ մնալով հայրենի հող ու ջրին, ինչպես նաև զավակներին պատգամելով՝ երբևէ վերատիրանալ բռնազավթված հայրենիքին:

«Ճակատամարտը» համոզված պնդում էր, որ Հայ դատը մնացել էր անորոշ և անհույս կարգավիճակում, իսկ հայությունը կարծես «փետուրաթափ էր

[19] Հայոց պատմություն 2010, 303–313:

[20] Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 1999, 490–492:

[21] Հայոց պատմություն: Հիմնահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը 2000, 399–405:

եղել»:[22] Հայկական հարցին հետամուտ հայկական երկու պատվիրակություն-ների[23] աշխատանքը թերթը սնանկ էր գնահատում, քանի որ նրանք չէին կա-րողացել 1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ին Լոնդոնում կայացած խորհր-դաժողովում[24] անցկացնել անգամ Ազգային տան գաղափար-առաջարկը. «1920 օգոստոս 10ին անկախ պետութեան մը հողային սահմաններն էր, որ պիտի ճշդէին, այժմ ցիրուցան բազմութիւնները տեղաւորելու համար կայան ունենալն է, որ կը սակարկեն»:[25] Այնուհանդերձ, պարբերականը դեռևս չէր հուսահատվում, որովհետև անփոփոխ էր մնացել Հայկական հարցի հիմքը՝ հայ ժողովրդի ազատ ապրելու իրավունքը:[26]

«Ճակատամարտը» զուգահեռաբար ներկայացնում էր թուրքական պե-տության ջանքերը Հայկական հարցը մեջտեղից հանելու համար, այդ նպա-տակով միջազգային ասպարեզում ծավալած դիվանագիտական հսկայական և խելամտորեն տարվող պայքարը, լուսաբանում էր մասնավորապես Փարի-զի, Մոսկվայի, Կարսի, Լոնդոնի, Լոզանի կոնֆերանսների ընթացքը, ելույթ-ները ու ամփոփում էր դրանց արդյունքները: Խմբագրակազմի արած հե-տևությունն այն էր, որ իր պատմական հայրենիքում հայը նույնիսկ ապրելու և սեփական ինքնությունը պահելու իրավունք գրեթե չուներ: Նրանից խլել էին իր հայրենի Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան: Նա դարձել էր վտարան-դի: Այս պայմաններում, երբ միջազգային դիվանագիտական սեղանից ար-դեն հանրապետական հռչակված Թուրքիան կարողանում է «հեռացնել» Հայ-կական հարցը, «Ճակատամարտը» համարում էր, որ սփյուռքում անհրաժեշտ էր համախմբվել ազգային դիմագիծը պահելու և աջակցելու համար ազգային կյանքի պետական արտահայտություն ստացած Խորհրդային Հայաստանի շուրջ:[27]

Խմբագրակազմի կարծիքով՝ 1923 թ. ընթացքում Խորհրդային Հայաս-տանը գնահատելի աշխատանք էր կատարել երկրի վերաշինության գոր-ծում:[28] Թերթը հետևյալն էր գրում. «Համահայկական տեսակէտով Խորհրդա-յին Հայաստանի գործերէն յիշենք 1000 գաղթականներու ընդունելութիւնը,

[22] «Ճակատամարտ», թիվ 1261, 02.01.1923:
[23] Հայ ժողովրդի պատմություն 1985, 348:
[24] Հայկական հարց հանրագիտարան 1996, 162–163:
[25] «Ճակատամարտ», թիվ 1261, 02.01.1923:
[26] «Ճակատամարտ», թիվ 1261, 02.01.1923:
[27] «Ճակատամարտ», թիվ 1566, 01.01.1924:
[28] «Ճակատամարտ», թիվ 1566, 01.01.1924:

այնքան դժնդակ պայմաններու տակ ՀՕԿի նոր համագումարը և Չիչէրինի յօժարութիւնը՝ 10000 նոր գաղթականներ տեղաւորելու համար»:[29]

«Ճակատամարտի» համար կարևոր էր դարձել միանալը Խորհրդային Հայաստանի վերաշինության ու հզորացման համահայկական ջանքերին՝ մի կողմ թողնելով քաղաքական որոշ հանգամանքներ:[30] Արևմտահայ գաղթականներին Խորհրդային Հայաստանում ընդունելու համար նրանցից պահանջում էին դավանել համայնավարների գաղափարներ, լինել աթեիստ, ապրել գրաքննության և միակուսակցական համակարգի պայմաններում:[31] Բացի այդ՝ նրանք Հայաստան պետք է տեղափոխվեին իրենց դրամական միջոցներով կամ սփյուռքյան կառույցների հաշվին:[32] Այդ մասին բացեիբաց խոսվել էր 1923 թ. դեկտեմբերի 4-ին Երևանում տեղի ունեցած Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների III համագումարում:[33] Խորհրդային Հայաստանի Ժողկոմխորհի առաջին նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանն իր ելույթում պարզաբանել էր, թե ինչու արևմտահայ բոլոր գաղթականներին չէին կարողանում տեղավորել Խորհրդային Հայաստանում. «Խորհրդային Հայաստանը եթէ բաւականաչափ հողեր ունենար, սիրով տեղ կուտար ամբողջ գաղթականութեան: Տեղեկութիւն առինք Պոլսէն, թէ 10.000 նոր գաղթականներ կ'ուզեն Կովկաս գալ: Որոշեցինք անմիջապէս ընդունիլ միայն այն պայմանով, որ գաղթականները գան իրենց միջոցներով, որովհետեւ այլապէս անօթի կը մնան»:[34]

«Ճակատամարտ» օրաթերթը դեմ չէր արևմտահայ գաղթականների ներհոսքին Խորհրդային Հայաստան և այլ երկրամասեր, սակայն գտնում էր, որ առաջնահերթ պետք է լինեին ոչ թե գաղթականի կամ ընդհանրապես որևէ մարդու կուսակցական պատկանելությունը և գաղափարական մոլեռանդությունը, այլ հայրենիքի վերաշինության գործի կարևորումը:[35] «Ցաւագին է հաւատաքննութիւնը անոնց, որ իրարայաջորդ աղէտներու մէջ կորսնցուցին ոչ միայն իրենց հաւատքը, այլ և իբր մարդ ապրելու ամէն միջոց և հնարաւորութիւն: Քաղաքականութեան ուղղութիւն փնտռել սա թշուառներու քով...հս-

[29] «Ճակատամարտ», թիվ 1566, 01.01.1924:
[30] **Հովսեփյան** 2020, 93:
[31] «Ճակատամարտ», թիվ 1567, 02.01.1924:
[32] «Ճակատամարտ», թիվ 1567, 02.01.1924:
[33] «Ճակատամարտ», թիվ 1567, 02.01.1924:
[34] «Ճակատամարտ», թիվ 1567, 02.01.1924:
[35] «Ճակատամարտ», թիվ 1570, 05.01.1924:

կապէս հեգնանք մըն է»:[36] Պարբերականը նկատում էր. «Հայրենիք մը չի կրնար պահանջել, որ իր զաւակները բանաւոր հոտի, ստրուկներու բազմութեան վերածուին, որպէս զի դուռները բանայ»:[37] Առաջարկում էր, որ Խորհրդային Հայաստանի վարիչները համագործակցեին սփյուռքյան բարեգործական հիմնադրամների հետ, որոնք կփորձեին ուղարկել արտադրական ու գյուղատնտեսական գործիքներ և մեքենաներ՝ երկրի տնտեսության զարգացմանը նպաստելու համար:[38]

Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարող ենք փաստել հետևյալը:

 «Ճակատամարտ» օրաթերթը մինչև իր վերջին համարն անդրադարձել է հայ գաղթականների հիմնախնդիրներին, խորհրդայնացված Հայաստանում նրանց պարտադրված ապրելակերպին հարմարվելու ջանքերին ու դժվարություններին, ինչպես նաև հանուն հավատի ու քաղաքական դիրքորոշման արևմտահայ տարագիրների կրած ճնշումներին:

 «Ճակատամարտի» համար էական նշանակություն ունեին հայ գաղթականների ներկային, ապագային և հայոց անկախ պետականությանը սպառնացող վտանգներին առնչվող հարցերը:

 Պարբերականի ուշադրությունից չեն վրիպել Հայկական հարցի զարգացումները և հայության սպասումներն ու ակնկալիքները: Կարևոր են Հայկական հարցին առնչվող միջազգային խորհրդաժողովների աշխատանքների լուսաբանումն ու դրանց որոշումների հրապարակումը թերթի էջերում, որոնք նաև սկզբնաղբյուրի արժեք են այսօր ձեռք բերել:[39]

 «Ճակատամարտը» գտնում էր, որ սփյուռքում անհրաժեշտ էր համախմբվել ազգային դիմագիծը պահելու և Խորհրդային Հայաստանին աջակցելու համար՝ անկախ քաղաքական հայացքներից ու տեսակետներից: Չէ որ թուրքական իշխանությունների ընդունած օրենքների համաձայն՝ հայն իր պատմական հայրենիքում ապրելու իրավունքից զրկված էր, իսկ խորհրդայնացված Հայաստանը դարձել էր հույսի փարոս ողջ հայության համար:

«Ճակատամարտի» խմբագրակազմը վստահ էր, որ յուրահատուկ ինքնապահպանության բնազդով օժտված հայ ժողովուրդը Խորհրդային Հայաս-

[36] «Ճակատամարտ», թիվ 1570, 05.01.1924:
[37] «Ճակատամարտ», թիվ 1576, 12.01.1924:
[38] «Ճակատամարտ», թիվ 1576, 12.01.1924:
[39] **Հովսեփյան** 2016, 242:

տանում կամ սփյուռքյան համայնքներում պետք է փորձեր քայլել «համապատասխան օրուան պահանջներուն»՝ վառ պահելով հայոց պահանջատիրության բուխարիների կրակը և պահպանելով աճող սերնդի հայեցի դիմագիծը:[40] «Պէտք է տոկալ...Պէտք է վառ պահել բուխերիկները: Պէտք է բուխերիկներ ստեղծել ուր որ չկան»,- սա էր օրաթերթի խմբագրակազմի և աշխատակիցների պատգամ-մոտեցումը:[41]

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գալոյան Գ. 1999, Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923, Երևան, «Գիտություն», 540 էջ:

Հայ ժողովրդի պատմություն, 1985, Երևան, ԵՊՀ հրատ., 528 էջ:

Հայկական հարց հանրագիտարան, 1996, Երևան, «Հակոբ Մեղապարտ», 527 էջ:

Հայոց պատմություն, 2010, Երևան, հ. IV, գք. I, «Զանգակ-97», 799 էջ:

Հայոց պատմություն: Հիմնահարցեր: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, 2000, Երևան, «Զանգակ-97», 488 էջ:

Հովսեփյան Մ. 2009, ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը 1909–1924 թթ., Երևան, ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 195 էջ:

Հովսեփյան Մ. 2016, ՀՅԴ կուսակցական և համակիր պարբերական մամուլը Օսմանյան Թուրքիայում 1909–1915 թթ.և 1918–1923 թթ., Երևան, ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 310 էջ:

Հովսեփյան Մ. 2020, Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918–1923 թթ.), Երևան, ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 192 էջ:

«Ճակատամարտ», Կ.Պոլիս, 1921, թիվ 695, 848, 849, 859, 873, 1923, 1261, 1924, թիվ 1566, 1567, 1570, 1576, 1577:

Վարդան, «Կարմիր Հայաստանի կարմիր օրերը», «Ճակատամարտ», 02.03.1921, Կ.Պոլիս, թիվ 695, էջ 1:

Սևյան Ռ., «Ի՞նչ կպատմեն թիվերը», «Ճակատամարտ», 01.09.1921, Կ. Պոլիս, թիվ 848, էջ 1:

Սևյան Ռ., «Ի՞նչ կպատմեն թիվերը», «Ճակատամարտ», 02.09.1921, Կ. Պոլիս, թիվ 849, էջ 1:

Յարո, «Հայաստանի մեծատարած սովը», «Ճակատամարտ», 14.09.1921, Կ. Պոլիս, թիվ 859, էջ 2:

«Խմբագրական», «Հայաստան», «Ճակատամարտ», 30.09.1921, Կ. Պոլիս, թիվ 873, էջ 2:

«Խմբագրական», «Ճակատագրական տարին», «Ճակատամարտ», 02.01.1923, Կ. Պոլիս, թիվ 1261, էջ 1:

[40] «Ճակատամարտ», թիվ 1576, 12.01.1924:

[41] «Ճակատամարտ», թիվ 1576, 12.01.1924:

«Խմբագրական», «1923 ազգային տեսակետով», «Ճակատամարտ», 01.01.1924, Կ. Պոլիս, թիվ 1566, էջ 1:

«Խմբագրական», «Ի՞նչ պայմաններով պիտի ընդունվին գաղթականները», «Ճակատամարտ», 02.01.1924, Կ.Պոլիս, թիվ 1567, էջ 2:

«Խմբագրական», «Առանց հավատաքննության», «Ճակատամարտ», 05.01.1924, Կ. Պոլիս, թիվ 1570, էջ 1:

«Խմբագրական», «Վերաշինության գործը», «Ճակատամարտ», 12.01.1924, Կ. Պոլիս, թիվ 1576, էջ 1:

ГАЗЕТА «ЧАКАТАМАРТ» О ПРОБЛЕМАХ БЕЖЕНЦЕВ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920–1924)

МАРИАМ ОВСЕПЯН

Резюме

Издававшаяся в Константинополе в 1918–1924 годах ежедневная газета «Чакатамарт» считается преемницей газеты «Азатамарт» (1909–1915 гг.), органа Западного бюро АРФД, который уже не являлся официальной газетой АРФД. Периодическое издание освещало положение и проблемы западноармянских беженцев, а также изгнанников, нашедших убежище в Советской Армении, на долю которых выпали тяжкие испытания в условиях новой политической системы, поскольку многие из них подверглись репрессиям за свои политические взгляды.

Материалы об эмигрантах включались в разделы «Армянская жизнь», «Айастан» и «Новости в Армении». В 1923–1924 годах «Чакатамарт» публиковала в основном статьи и новости, взятые из советско-армянской периодики, поскольку газета не имела своих корреспондентов в Советской Армении. Параллельно с ними на ее страницах издавались письма и жалобы, присланные в редакцию из Советской Армении без указания источников информации.

В 1920–1923 гг. в своих аналитических и редакционных материалах газета «Чакатамарт» подчеркивала, что Армения была советизирована насильно, а народ, в том числе западноармянские беженцы, в большинстве своем был против упразднения Первой Республики Армении и доминанты большевиков в качестве правящей силы. Касаясь эмиграции западноар-

мянских изгнанников из Советской Армении, газета объясняла это явление прежде всего невысоким уровнем социально-экономического положения и начавшимися против них политическими преследованиями со стороны государственных органов.

В 1923 году, после Лозаннской конференции, в своих редакционных статьях «Чакатамарт» отмечала, что Армянский вопрос, похоже, зашел в тупик, а Советская Армения рассматривается как оплот объединяющей всех армян государственности (пусть и неполной), которой должны содействовать структуры армянской диаспоры, в связи с чем и газета обращалась к советским властям с призывом к сотрудничеству.

В последний год своего издания «Чакатамарт» издавала материалы, касающиеся повседневной жизни переселенцев в Советской Армении, их успехов и достижений.

Ключевые слова: *ежедневная газета «Чакатамарт», Армянский вопрос, Западная Армения, Советская Армения, Севрский договор, Лозаннский договор, армянские беженцы.*

“CHAKATAMART” IN SOVIET ARMENIA ON THE PROBLEMS OF IMMIGRANTS (1920–1924)

MARIAM HOVSEPYAN

Summary

“Chakatamart” was a daily newspaper published in Constantinople from 1918 to 1924. It succeeded the “Azatamart” daily newspaper, the official organ of the ARF Western Bureau, published in Constantinople from 1909–1915. The periodical addressed the situation and problems of Western Armenian immigrants until its final edition. It also discussed the challenges faced by exiles who sought refuge in Soviet Armenia, their efforts to adapt to the new political system, and the repressions they faced due to their faith and political views.

Materials about immigrants were included in the “Haykakan Kyanq”, “Hayastan”, and “Lurer Hayastanen” sections. From 1923 to 1924, "Chakatamart" mainly published articles and news on these topics from Soviet-Armenian

periodicals, as it did not have its correspondents in Soviet Armenia. In addition, it printed letters and complaints sent to the editorial office from Soviet Armenia without mentioning the sources of the information.

Summarizing our study, we can state that particularly in 1920–1923, in its articles as well as editorials, “Chakatamart” emphasized that Armenia was Sovietized by force, and the people, including Western Armenian immigrants, were mostly against the abolition of the First Republic of Armenia, and the Bolsheviks becoming the ruling power. Regarding the emigration of Western Armenian exiles from Soviet Armenia, the newspaper attributed this phenomenon primarily to their poor socio-economic status and the political persecutions initiated against them by state bodies.

In 1923, after the Lausanne Conference, the editorial staff of “Chakatamart” wrote that the Armenian question seemed to have reached a dead end, and Soviet Armenia was viewed as a manifestation of statehood uniting all Armenians (albeit not completely). The structures of the Armenian diaspora should try to be useful to Soviet Armenia, and the newspaper called for cooperation with the Soviet authorities.

In its final year of publication, “Chakatamart” presented the daily life of emigrants in Soviet Armenia, and the work carried out for them through the relevant government agencies, as well as the success and achievements of Armenian emigrants.

Keywords: *“Chakatamart” daily newspaper, the Armenian Question, Western Armenia, Soviet Armenia, Treaty of Sevres, Treaty of Lausanne, Armenian immigrants.*